ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» «դեկտեմբեր» 2024թ. ՆՄՈ/ 603 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ՆՄՈ/81 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով , 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով,ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1929-Ն որոշումը, առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.08.2023թ N 103-Ն հրամանի պահանջներով, գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների հավելավճարի տրամադրումն իրականացնելու նպատակով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի փետրվարի 8-ի «Գումար հատկացնելու մասին» ՆՄՈ/81-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

2) «1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում» միջոցառման շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 39 241 400 (երեսունինը միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 35 212 150

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

(երեսունհինգ միլիոն երկու հարյուր տասներկու հազար մեկ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 10 (տասը) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի:».

3) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

4) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ՝ Ա. Հովհաննիսյանին հանրակրթական ծրագրերով նախկինում կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ,ՀՀ Արմավիրի մարզի «Բերքաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքել գումարի հատկացման պայմանագիր :»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-12-17 09:22:40 GMT+4
Հավաստված էլեկտրոնային

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ
2024 թվականի [illegible]ի 17-ի N [illegible]-որոշման
ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ
2024 թվականի փետրվարի-ի N ՄՈ/89-2024- Ա որոշմա

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ «ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԻՆՉև 100 ԱՇԱԿԵՐՏ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ «ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» ՀՈԴՎԱԾՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

h/h	*դպրոցի անվանումը*	*ՀՀ դրամ*
1	2	3
1	Արգինայի միջնակարգ դպրոց	***6548300***
2	Արտամետի միջնակարգ դպրոց	***5559100***
3	Արևադաշտի միջնակարգ. դպրոց	***6817960***
4	Բաղրամյանի/ Բաղրամյան/ միջնակարգ դպրոց	***3095840***
5	Երվանդաշատի միջնակարգ դպրոց	***2175720***
6	Հուշակերտի միջնակարգ. դպրոց	***2660940***
7	Տալվորիկ հիմնական դպրոց	***2401380***
8	Լեռնամերձի հիմնական դպրոց	***2018770***
9	Ֆերիկի միջնակարգ դպրոց	***2708580***
10	Բերքաշատի միջն դպրոց	***1225560***
Ընդամենը		***35212150***

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 16.12.2024 17:52:08 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023